

Ա. ՀԱՏ ԽՕՍՒՔ

ՇԱԲԱԹ, 7 ՅՈՒՆԻՍ 1906, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ



ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՒՈ

Իրիկուն մը,--ընտրութիւններէն մէկ քանի շա-
քաթ վերջն էր,-- «ղլիքի» սուրճի մը և նորընտիր
երեսփոխաններէն մէկուն անուամբ օրինաւորապէս
մկրտուած «սրէ սիալ» սիկառէթի մը շոգելից ու
ջերմին մանրութեանը մէջ, վայելիլու վրայ էի հայ
մականունի մը պէս վերջապող՝ և այդու աւելի քաղ-
ցըր՝ երեկոյեան հանրածանօթ խաղաղութիւնը խառն
ընդ խղճմտանքի անդորրն Հայու մը որ կատարած է
իր պարտականութիւնն առ ազգն ու հաշիւները կար-
գադրած Սահմանադրութեան հետ՝ երեք կիրակի յա-
ջորդաբար երթալով Եկեղեցի, ա. անգամ՝ ձեռնուռնայն
կամ աւելի ճիշտը՝ քուէն ձեռքը՝ ետ դառնալով չեմ
զիտեր Սահմանադրութեան ո՞ր յօդուածին չի կտորը-
ւելիք խաթ երը համար, և միւս երկու անգամները՝
մէջ մէկ քուէ ձգելով նուիրական տուփին մէջ իբր
որուպ մի արխուր՝ ժողովրդային զիտակցութեան
թանկագին դանձանակին մէջ:

Կը ծխէի, ուրեմն կը մտածէի, ըսե՛նք կը մտա-

ծխէի ու մտածումս ետ կ'երթառ ու քաղ կ'ընէր ընտ-
րութեանց նախապատրաստական շրջանին այլազան
փուլերն ու դրուագները, կուսակցական կամ հայկա-
կուսակցական մաղառներով, փուշերով, ցախերով ու
ձախաւերութիւններով ամէն կողմէ շինուած գոյնըզ-
գոյն ցանկերը, որոնցմով ուղուեցաւ շրջափակել ժո-
ղովրդային խղճմասնքին սնասհման դաշտը. կը համ-
րէի մտովի այդ բանկերուն ներթիզին իբրեւ կրկնափո-
խանցու իրենց անունին կրկնութեամբը տնկուած
բազմաթիւ անձերը, որոնցմէ շատերը տեղուէն վրայ
չորցան ժողովրդային խորշանքին կամ խորշակէն դուս-
տ 18 հոգի միայն, անհամար քուէթուղթերու մէջ
գուրգուրանօք փաթթուած, փոխադրուեցան Երեսփո-
փոխովի առաջնորդարանական ջերմանոցը (serre chaud).
գեղեցիկ ծրագիրներ ծաղկեցնելու եւ ազգային շահե-
րը պտղաւորելու համար :

Կը մտածէի այդ փորցանկաշատ շրջանէն ազա-
տած ընտրողի մը գոհունակութեամբ, -- գիրար խաչա-
ձեւող կամ խաչը հանող այն ընդդիմամարտ յայտա-
բարութեանց, ժողովուրդին անպաշտպան զլիսուն որ-
տորդ թաշուններու պէս անզայող կոչերուն, յորդոր-
ներուն, հրամանագիրներուն... Կը մտածէի անոնց
որոնք ընտրական դորձակալի շրջուն ու խօսուն ի մի
բան քրքնաջանջան գործունէութեամբ աատեցան
ու աատանեցան, անոնց որ ընտրելի լուռ ու մունջ
ու նստուկ տաղնապներով ձենձերեցան ու միացին...
անոնց որ ինկան քզէդաշտին վրայ եւ անոնց որ
յաղթական դիմեցին Առաջնորդարան...

Աս անգուանքն էի, երբ 40ը անցուկ մարդ մը
չուկացիի ցնկերքովի գէմքով, որ եթէ գինեմող մը
չէր, մեծ ու կատաղի զրպարտիչ մը կը կրէր իր գէմ-
քին վրայ յանձին իր քիթին որ կաս կարմիր էր գը-
րասնեակէն ներս մտաւ, -- մարդուն համար է խօսքս--
բարեւ տուաւ յոյժ ընտանի ձեւով եւ առանց սպա-
սելու հրաւերիս, հրաւերիս որ կ'ուշանար զարմացու-
միս ձեւերէն չի կրնալով ազտտիլ նապաւ ավտարի մը

վրայ, եւ, ո՞վ ապշութիւն, ինծի ուղղելով խօսքը
յստե՛նապէս ըսաւ.

--Հայտէ՛ սորձ մը ապսպրէ տէ խմեմ, պաղ պաղ
ջութով... էօ՛ֆ, սա ի՛նչ տաք է...

--Բայց ներեցէ՛ք, ըսի, որո՞ւ հետ խօսելու պա-
տիւը ունիմ...

--Հա՛, հա՛, հա՛, չի ճանչցա՞ր ինծի, ըսաւ այցե-
չուն առանց կարեւորութիւն տալու խօսուածքին ա-
րարագական ոճին ու շեշտին:

--Չեմ յիշեր կոր... ներեցէ՛ք...

--Աղբար, ըսաւ, զիս հետզհետէ գռնկացնելովի,
խելքդ ո՞ր է... ես ան ժողովուրդը չեմ որուն հետ «պա-
րոն»ով, «Տիար»ով, «Դուք»ով չեմ գիտեր ինչով տեսնը-
ւելու եկար ասիկց տմիս մը առաջ, Սարաֆիէ, սա
ս՛ւր է, ընտրութիւններէն առաջ... Թօհաֆ բան, ի՛նչ
ալ չուտ մտայուեր ենք...

--Այո՛, այո՛, միտքս կուգար կոր, ըսի հեռաւոր
եւ քնա՛ւ քաջայերական շեշտով մը... կը ներէ՛ք, առ-
ջի բերան չի ճանչնալուս... գիտէ՛ք, սա ընտրութիւն-
ները որո՞ւ վրայ ինկք ձգեցին որ...

Բայց ինքնիրենս կ'ըսէի որ քնաւ միտք պահելու
պէտք չունէի մէկը որ ընտրութենէ քնտրութիւն ե-
րեւան կ'ելլայ, մարդ կ'ըլլայ, ուշադրութիւն կը հրա-
ւիրէ, եւ որուն կարեւորութիւնը, թագաւորութիւնը
կը սկսի բնտրական շրջանին հետ եւ կարգադրուած
վերջին քուէին հետ կ'իյնայ կը մնանի...

Կը մտածէի նաեւ թէ Տիար ժողովուրդը ի՛նչ
զործ կրնայ ունենալ ինծի հետ, իբր հանրային մար-
դու. անձնական խնդրանքի մը համար չէր կրնար ըլ-
լալ քանի որ ոչ աղքատախնամի, ոչ ալ թաղական
խորհրդոյ անդամ էի, հակառակ մին կամ միւսը ըլլա-

ըլու համար քան մը բրած չըլլալուս- հանրային ինդ-
րոյ մը համար ալ չէր կրնար ըլլալ քանի որ Տ. Փո-
ղոստայեցի գործը լինցած էր ալ, քանի որ կատարած
էր միակ թէև յաւազ» պաշտօնը որուն կոչուած է
ընտրութեանց ստան,-- ի մի քան տուած էր քուէն
և քուէին հետ վրայ տուած ինչ որ կը կազմէր իր
ուժը, հրապոյրը, օգտակարութիւնը և փառքը: Ա-
տոնք կը մտածէի ու երեսը կը նայէի.

--Ազրա՛ր, առ սուրճը բերել չի աա՛ս... ծարաւ է
կը մտնիմ կոր պէ...-

Իբրաւ ըմբռնեցի որ Տիար Փողոստայեցի դեռ
ինքզինքը տէր կ'զգար բոլոր այն առանձնաշնորհում-
ներուն, չօգոթորթութեան ու սիրաշահումի սուրճե-
րով, օղիներով, յօղուածներով և սիկարէթներով
պատուափրուած ու բուրվառուած այն կարեւորու-
թեանը զորս ստացեր էր ընտրական չըջանին սկիզ-
բէն իսկ: Մեծ տղայ մը զոր շփայուցեր էին, որ և-
րես առեր էր:

Սուրճը ապսպրեցի սակախ, ստոյիկեան երեսոյ-
թովը մէկու մը որ աւելորդ զո՛նդութիւն մը կ'ընէ. և
որո՛ւ, մարդու մը որմէ խեր չըլլալէն զատ՝ կ'սպառ-
նար չէնք շնորհք զլիտուցաւ մը ըլլալ. ինչպէս որ շա-
տեր, ընդ որս և ևս, եղեր էինք իրեն ընտրութեանց
ստան:

Սուրճը եկաւ. Տիար Փողոստայեցի սիկարէթը վա-
ռեց օրինական ձեւակերպութիւններով. մէկ քանի
ուժայ սուրճ կուլ տուաւ իրարու ետեւէ իր իրաւունք-
ներուն խոշապէս գիտակից ու համոզուած երեսոյ-
թով մը, վրայէն ջուր խմեց անչէջ խանդավառու-
թեամբ, ու, Ֆէսը քիչ մը ետեւ նետելով, ինչ որ ի-
րեն քով «քէյֆ»ին օրհնեալ գալուստը ողջունելու իս-
կատիպ ձեւ մըն է, սկսաւ.

--է՛ր ի՞նչ կայ ի՞նչ չի կայ, նայինք, գործերը
փնջպէ՛ս են...--

--Ա՛նէն ատենուան պէս, պ. Ժողովուրդ, գէշ ա-
յէկ կ'երթանք կոր... բաւական թուով բաժանորդներ
ունինք, բայց ամէնքն ալ վճարող...--

--Ձի հասկցար ըսածս ազգար,-- աս մէկպա... մեծ
գործերուն համար հարցուցի... բան... ինք... հա՛,
ազգին գործերուն համար. ի՞նչ ջուրի վրայ են նա-
ջինք...--

--Ճանրժ դուն ալ պ. Ժողովուրդ, թօ՛հ ա ֆ ես
պէ... քեզի ի՞նչ... կուզեն ջուրի վրայ ըլլան, կուզեն
ջուրին տակը... (1) ինչո՞ւ կ'ըսողիս ատանկ քեզի նեո
վերաբերութիւն շունեցող խնդիրներով, գործդ նայե՛
մարդ Աստուծոյ...--

--Ա՛տ ինչ ըսել է... ես Ժողովուրդ չեմ մի...
պէտք է հասկնամ, պէտք է գիտնամ, պէտք է զբաղիմ...--

--Այ քու գործդ լմնաւ... քուէդ տուիր, խա-
չա՛ս... չնորհքով մարդեր ընտրեցիր, ալ տեղդ հան-
չիտո նստէ՛...--

--Աս ի՞նչ ըսել է... ես խօս խօսելո՞ւ լի եմ ա-
սար աստեղը... երեք տարի է գլուխ կը տանիք կոր...
ո՞ւր, ես ալ չիյտեմ. հէլէ է երեք ամիս է ըրածնիդ
ժողածնիդ չի մնաց իս անհանգիստ ընելու համար...
ամէն կողմէ՛ շտաղ լո՛ւրդ, Ժողովո՛ւրդ... Ժո-
ղովուրդ սանկ, Ժողովուրդ նանկ...» կը նստիմ «Ժողո-
վուրդ, ոտքի ելիր, Ժողովուրդ, ի՞նչ անչարժ նստեր
ես...» Բնանամ «արթնցիր, Ժողովուրդ, Ժամ է ար-
թըննալու...» իս բռնի կատղեցուցիք. ես ինքիր հա-

(1) Ուր որ կը գտնուին այժմ ազգ. տեղական
գործերը. քաջ սուղա՛յ մը կը փնտռուի, մեծ վարձա-
տրրութիւն եւ երախտագիտութիւն :

էիս զարարաբազ, սուսիկ բաւսիկ մարդ մըն էի-
իւնլըը միտքս գործիս, տունիս... «Ժողովուրդը սանկ
կ'ընէ... Ժողովուրդը նանկ պիտի ընէ... Ժողովուրդը
օրէնք կ'ուզէ, Ժողովուրդը գայթակղած է... Ժողո-
վուրդը պիտի տապալէ. պիտի...» անչափ ըսիք, ան-
չափ գրեցիք որ ես ալ սախտուեցայ բաներ մը ը-
նել... «Ժողովուրդին իրաւունքները սաքի տակ կ'առ-
նըւին կոր-- ըսիք- բարկացայ... ո՞վ է նայինք իրա-
ւունքներս սաքի տակ անոողը... իրաւունք ունենալա
չիյտէի, բայց քանի որ ուսումնական մարզիկ կ'ըսեն
կոր, հարկաւ ունիմ եղեր... Ժողովուրդին փարաները
կ'ուտեն կոր, պարապ տեղը կը վատնուին կոր, ըսիք,
արիւնս գլուխս ցատքեց, ես որ մարդու հինգ փարսոյ
չեմ կերցնե՛ր... կերած ապուրնին նայէ՛: Ժողովուր-
դին տղաքները անբարոյականութիւն կը սորվին կոր
գպրոցին մէջ... սղաքս գպրոցէն քաշեցի... Խնամա-
կալութեան խաղթութիւնները Ժողովուրդին պատիւը
կ'աւրեն կոր, ըսիք. ես որ իմ պատիւիս մէկ մազին
ձեռք դպցնել չեմ ի տար, սա որ լսեցի տաճիկ կըս-
րեցայ... մինսկ ասո՞նք... գործ մը տեսնալ պէտք ե-
ղաւ մի՞... հայտ է՛ Ժողովուրդին օձիքէն բռնենք...
միթիւնկ պիտի ըլլա՞յ... Ժողովուրդ, ներկայ գտնուե-
լու է, հա՛, քեզ տեսնամ... քունս ծախեցի, գացի, քա-
նի՞ անգամ, ես ալ շիյտեմ. ցոյց պիտի ըլլա՞յ... ա-
ման Ժողովուրդ եկեղեցի կրթալու է... ծեծելը ու
ծեծ ուտելը աչքս աննելով գացի... պօռալու է, պօ-
ռացի, թափել կոտրելու է, կոտրեցի... ըրածս մնա՞ց
որ... ասոր անոր հետ գէշ մարդ եղանք Ազգին ու-
ղու. ոհն, օրէնքին սիրուն... Ազգին շահերը պաշտպա-
նեցի, խանութիս յաճախորդներէն մէկ քանի հոգի
կորսնցուցի... 10ը տարուան բարեկամէս շուկայի կամ
տունի զրացիէս եղայ, ի՞նչ է. Բարթողեան է եղեր,

Սնամակալութեան արբանեակներէն է եղեր... Առաջ-
նորդարանին հետ գործեր ունիմ, չեմ համարձակիր
կոր երթալ. անունս անչա՛փ գէշ հանելիք որ ..

--Պ. Ժողովուրդ, ատոնք ընկով քու պարկեշտ
քաղաքացիի պարտք միայն կատարեցիր... եւ գիտես
որ ըստ Սահմանադրութեան՝ ամէն Հայ պարտակա-
նութիւններ ունի առ Ազգն...

--Աղէկ, ա՛, սա մերին իրաւունքները ի՞նչ ե-
ղան... «սրբազան, նո՛ իրական» իրաւունքները ի՞նչ ե-
ղան... ըսաւ Ժողովուրդ. այս գործածած բառերէն
գոհըպարտ երեւոյթով մի ինչ է նէ, ուրախանալիք
բան մը կայ նէ, քիչ մը կարգալ սորվեցայ այս երեք
չորս տարուան մէջ, բաւական թուով ալ բաւ... ես
որ առաջ կապելով կը կարդայի ու մինչեւ որ բառե-
րը տեղ մը կապէի նէ իմաստը միտքէս կը փսխչէր,
փառք Սահմանադրութեան, գէշ աղէկ յօդուած մը
հասկնալու վիճակին հասայ... հերիք է որ մէջը 20
Ժողովուրդ ըլլայ, 10 հատ Սահմանադրութիւն, չեմ
գիտեր քանի հատ օրէնք, ապօրէն խնամակալութիւն,
եւն, եւն... ի՞նչ կ'ըսէի կոր... հա՛... սա մերին իրա-
ւունքները ի՞նչ եղան... պատասխան տո՛ւր նայիմ...

--Աստուա՛ժ իմ, Տիար Ժողովուրդ... օրէնքը գոր-
ծագրուեցաւ... իրաւունքներդ գոհացում գտան... Խը-
նամակալութիւնը սապալեցաւ, ասկէ աւելի ի՞նչ կ'ու-
զես... երբ որ նոր ընտրութիւններու ատենը գայ, քե-
զի չենք մոռնար, հոգդ մ'ընէր... կր տեսնուինք հետդ...

--Վա՛յ, ըսել է ալ չգրաղի՞նք ազգին գործերով...
ըսել է ալ իրաւունք չունինք հարցնելու թէ ընտրը-
ւած մարդիկնիս ի՞նչ կ'ընեն կոր... Պետները պիտի
պիտի գոցեն, Համբարձում ազային ծրարը պիտի
բանա՞ն... այս ինչը պիտի ճամբնօն... պատիւնիս տե-

Ղը պիտի բերե՞ն... դպրոցը ինչպէ՞ս պիտի մաքրեն,
 Առաջնորդարանին բակը ի՞նչպէս պիտի աւելն... և
 հեղեցին ի՞նչպէս պիտի սրբեն... ինչպէ՞ս չ՛ղբաղիմ
 ասանկ կարեւոր խնդիրներով: Կերած ապուրնին նա-
 յէ՛, քուէս տուեր եմ եղեր, ալ բանի մը խառնուելու
 իրաւունք չունիմ եղեր... աս որչափ շուտ բիւացաս
 ինկաւ... ասկից ամիս մը առաջ ձեռքի վրայ կը բունէ-
 իք ինձի, կամ աւելի շիտակը, ձեռքէ ձեռք կը քաշէիք
 կոր... պէյերուն, բաշաներուն չեղած պատիւները, չը
 տուած գովասանելը ինձի կ'ըլլուէին կոր... կեանքիս
 մէջը չի տեսած չի բարեւած մարդիկս իմ բարեկամ-
 ներս եղան, իմ պաշտպաններս... ուսումնական, ջոճ,
 մենծ-աղայ Վաճէնքն ալ բարեւ տալ սկսան մեծ պօյէն
 մինչև պետին. խանութս հանդիպեցան, ճամբան կե-
 ցուցին զիս, մինչև տունս եկան, երկար բարակ խօ-
 սեցան, շունչ հատցուցին, ամէն օր յայտարարուեցին-
 ներ, կոչեր, ցանկեր մինչև ոտքս կուզային... Ժողո-
 վուրդ, դուն գիտես... աղէկ մտածէ՛. նայէ որ ընտ-
 րած մարդերդ չնորհրով ըլլան, չնորհրով մարդ ալ
 այս ցանկէն դուրս մի՛ վնտուեր... Հնչակեան, Դրօ-
 շակեան, չէզոք, մենծ-աղայական. սահմանադրական
 իրարու ևս եւէ կուզային. կ'աղաչեմ, Ժողովուրդ, քը-
 ւէդ սրբոնց տո՛ւր, նրբոնց մի տար... աս մարդը...
 սախըն հա՛... մէկալը... օ՛ պատուական մարդ...
 քուէդ չէ ինքզինքդ ալ տո՛ւր անոր... զեռ ասոնք
 բան մը չեն. անչափ մենծ մարդ էի որ ներկայացու-
 ցիչներ ունեցայ զեպականներ, զգացումներու թարգ-
 մաններ ունեցայ. հապա՛, ամէնքն ալ անուն ու գիրք
 ունեցող մարդեր որոնք իմ կողմանէս, իմ անունովս
 գաղթին խոնարհաբար տեսնուեցան կառավարութեան
 հետ, ինձի հաշիւ տուին վերջը. ես ալ «չատ աղէկ,
 ապրի՛ք տղաքս, գո՛հ եմ ձեռնէ՛» ըսի... Ասոնք բոլորը

ժողովուրդներ... ան ատենը մարդ էի...

--Ան ատենը ընարող, Տիար, ժողովուրդ:

--Իսկ հիմա՞յ...

--Մընտոող... ըսի եւ գրասենեակէս դուրս ելայ,
մնացորդը չառած, մինչ ժողովուրդը իր միջինի
ձայնովը կը պոռար ետեւէս՝

--Ե՞ս մի՞ դուք:

ՊՈՆԴ



ՄԵԿՆՈՒՄ

Եզնիկ սրբազան Ապահունի որ, ինչպէս
յայտնի է, բաւական ժամանակէ ի վեր Գահի-
րէ կը գանուի, Վեհ. Կաթողիկոսէն մասնաւոր
հրաւէր ստացած է Ս. Լյմիածին երթալու:

Նորին սրբազնութիւնը յուլիս 9, հրկու-
շաբթի օր, կէսօրուան կառախմբով պիտի մննին
Գահիրէէն դէպի Ալեքսանդրիա ուր պիտի
հասնի ժամը 4ին մօտերը:

Եզնիկ սրբազան քանի մը օր հոս մնալէ
ետքը ուղղակի պիտի երթայ Նորին Վեհափա-
ռութեան մօտ:

ՕՐԱԹԵՐԹԸ

Անցած անգամ տարտամօրէն ու քիչ մը
ալ կատակարար, եգիպտահայ գաղութին հա-

մա: օրաթերթի մը պէտքը շեշտեցինք, այսօր
կուգանք լրջօրէն յայտարարելու թէ վերջնակա-
նապէս որչաժ ենք քիչ օրէն ձեռնարկել օրա-
թերթի մը հրատարակման:

Այս թերթը պիտի ըլլայ զուտ տեղեկու-
թեանց թերթ մը: Պիտի պարունակէ քաղաքա-
կան կարևոր լուրեր, ազգային լուրեր, տեղա-
կան լուրեր և օրուան հեռագիրները. բաց աս-
տի օրը օրին պիտի տայ պոստալի արժէթղթե-
րու գիները, Քրէտի մոնսիէի, Հայոց Ազքա-
տտինամիին, Արևելեան երկաթուղիներու վիճա-
կահանութեանց շահող թիւերը, վերջապէս այն
ամէն տեղեկութիւնները որոնք հանրութեան
մեծամասնութիւնը կը շահագրգռեն: Օրաթեր-
թը պիտի պարունակէ նաև շոգենաւային ցու-
ցակները:

Քալ անգամ աւելի մանրամասնութիւններ:

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Հակառակ մեր ակնկալութեան և, միեւնոյն ժա-
մանակ, մեր բաղձանքին, Ալեքսանդրիոյ ազգային
գործերը նորէն խորասուզուեցան այն քառսին մէջ
ուրիշ գուրս հանելու համար այնքան ջանքեր ըրինք
տարիներէ ի վեր: Նորընտիր Երեսփոխանական ժո-
ղովի անդամները կարելի չեղաւ համաձայնեցնել իրա-
բու հետ, կարելի չեղաւ Քաղաքական ժողով մը
ընտրել, կարելի չեղաւ վերջապէս օրինաւորութեան

ճամբուն մէջ մտնել :

Առաջնորդը սնցած շարաթ օր կծիկը գրաւ ու Գահիրէ գնաց, զօրապետի մը պէս որ պատերազմի զաշտէն կը փախչի իր բանակին խառնակութիւնը տեսնելով :

Երեսփոխանական նորընտիր աթոռներուն վրայ փոխանակ սահմանադրական յետոյքներ բազմելու, կրկին Ուղուրեանականներ եկան նստեցան եւ յետինքն չար քան զառաջինն եղաւ :

Պատրիարքական յանչիմանագիր մըն ալ հասաւ ասոնց վրայ, ուղղեալ առ Տ. Ռուբէն քահանայ Գաբրիկեան, որուն մէջ Սրմանեան պատրիարք ապօրէն կը հռչակէ ժողովուրդին քուէներով ընտրուած երեսփոխանական ընտչութիւնը եւ կը հրամայէ զայն բեկանել :

Ո՛ւր պիտի երթայ այս խառնափնդոր վիճակին վերջը, ի՞նչ լուծում պիտի գտնէ ներկայ կացութիւնը... Ահա՛ հարցումներ որուն պատասխան չեն կրնար կոր տալ ազգային գործերու ամէնէն փորձառու մասնագէտներն անգամ :

Երեսփոխանական ժողովը պիտի պաշտօնավարէ՞, պիտի բեկանուի՞, Երեսփոխանական ժողովի նոր ընտրութի՞ւն պիտի ըլլայ, Երեսփոխանական ժողովէն վազ պիտի անցնինք ու Թաղական Խորհո՞ւրդ պիտի ընտրենք, ընտրութիւն պիտի չըլլայ ու պատրիարքարանը առժամեայ Թաղ. Խորհո՞ւրդ մը պիտի որոշէ, հին ձևով Խնամակալութի՞ւն մը պիտի կազմուի... :

Խորհո՞ւրդ, գաղտնի՞ք, անորոշութի՞ւն :

Տիար ժողովուրդը, ինչպէս կ'երեւայ մեր աշխատակից «Պոնդ»ի հետ ունեցած տեսակցութենէն, չառ

գոհ չէ իրաց արգի կայութենէն եւ իրաւունք ալ ունի :

Պէտք է ժամ առաջ վերջ մը տալ այս անորոշութեան եւ ըստ մեզ շատ զարմանալի ու շատ ալ դատապարտելի կը գտնենք Գեր. Առաջնորդ Աղանունի հօր ընթացքը որ ներկայ վիճակին առանց դարման մը խորհելու, կը ձգէ Գօհրէ կ'երթայ, պիղատոսարար ձեռքերը լուալով :

ՄԵԿՆՈՒՄԸ

Կը պատմուի թէ անցած շաբաթ օր ժամը կրկուքուկէսին միջոցները Տ. Յ. Շնորհքեան Առաջնորդարան կ'երթայ եւ կ'ուզէ տեսնուիլ Գեր. Աղանունի հայր սուրբին հետ :

Նորընտիր երեսփոխանը անմիջապէս կ'առաջնորդուի մեր հոգեւոր հովիւին քով որ բազմած թիկնաթոռին վրայ, ձախ ձեռքով մօրուքը կը շոյէր (մեր Առաջնորդին ամէնէն հաճելի մարմնամարզը, ամէն տուն որ ազգային տեղական գործերը իրեն քանի մը րոպէ հանգիստ կը շնորհեն) :

--Բարեւ, հայր սուրբ, կը գոչէ Տ. Շնորհքեան գոհ եւ ուրախ գէմքով մը, վերջապէս ամէն բան կարգադրեցինք, բոլոր զժուարութիւնները հարթուեցան...

--Շատ աղէկ, շատ աղէկ, կը պատասխանէ առաջնորդը, շարունակելով իր մարմնամարզը :

--Պ. Թուրչուճեան գրաւոր կերպով հրաժարականը տուաւ Քաղաքական ժողովի անդամակցութենէն...

--Աղէկ :

--Պ. Վահան Խօրասանձեան նմանապէս անձամբ պիտի գայ հրաժարականը տալու :

--Լաւ :

--Պ. Հայկ էքիզէր հիմա թէլէֆօն պիտի ընէ
հրաժարած ըլլալը յայտնելու համար:

--Շատ լաւ:

--Կամսարական էֆէնտին հաւանեցաւ Քա-
ղաքական ժողովի անդամակցելու:

--Ատ ալ աղէկ:

--Ուրեմն, հայր սուրբ, հաճեցէ՛ք անմիջապէս ի
նիստ հրաւիրել Երեսփոխանական ժողովը որպէսզի
չոր Քաղաքական ժողովի ընտրութիւնը կատարենք:

--Բնականաբար:

--Կը խնդրեմ անյապաղ հրաւերները ուղղեցէք
որպէսզի ժամանակ չկորսնցունենք:

--Այնպէս է, անմիջապէս գրել տալու է:

--Եթէ կարելի է այս վայրկենիս պ. Նշան Ամա-
տունին կանչեցէ՛ք որպէսզի նամակները գրէ:

--Աղէկ ըսիր, կանչենք:

--Ուրեմն մնաք բարով, ես երթամ, դուք անմի-
ջապէս նամակները ղրկել տուէք:

--Անհոգ եղիր, պարօն Շնորհքեան:

--Մնաք բարով:

--Աստուած հետդ ըլլայ:

Պ. Շնորհքեան դուրս կ'ելլէ, պ. Նշան Ամատու-
նին կը գտնէ, Առաջնորդին քով կը ղրկէ ու ինք կը
մեկնի:

Պ. Ամատունի կը ներկայանայ Առաջնորդին որ
միշտ մօրուքը կը շոյէ:

--Պ. Շնորհքեանը ըսաւ որ զիս ուզեր էք, նա-
մակներ կան եղեր գրուելիք:

--Ի՞նչ նամակ:

--Երեսփոխանները ի նիստ հրաւիրելու համար:

--Հա՛, միտքս ինկաւ... քանի՛ն կը մեկնի:

--Ո՞վ, հայր սուրբ,

-- Գահիրէի էքսքրէսը:

-- Ժամը 4ին քառորդ մնացած:

-- Շուտ կառք մը կանչել տո՛ւր, հագիւ կէս ժամ ունիմ:

Եւ Աղանունի վարդապետ պարտականութիւնը կատարող հովիւի մը հանդարտութեամբ կառք կը մտնէ ու կը մեկնի Առաջնորդարանէն ի Գահիրէ:

Թ Ե Ր Թ Ի Կ :

Օ Ր Ա Թ Ե Ր Թ

Յառաջիկայ չորեքշաբթի, յուլիս 11էն ըսկրսեալ Ալեքսանդրիոյ մէջ լոյս պիտի տեսնէ տակնօրեայ առաւօտեան լրագիր մը ԹԵՐԹԻԿ անունով:

ԹԵՐԹԻԿ զուտ տեղեկութեանց աղբիւր մը պիտի ըլլայ: Օրը օրին ընթերցողներուն պիտի տայ քաղաքական, ազգային, տեղական լուրեր, օրուան հեռագիրներ, Սակարանի և առևտրական տեղեկութիւններ, կարևոր արժեթղթերու վիճակահանութեանց շահող թիւերը, երկաթուղեաց և շոգենաւներու ժամանակացոյցները ամէն անգամ որ փոփոխութիւն կըրեն. վերջապէս ԹԵՐԹԻԿ անհրաժեշտ ընկերը և բարեկամը պիտի ըլլայ ամէն ընթերցողներու: Թերթը պիտի խմբագրուի խիստ գիւրահասոյնալի աշխարհաբարով մը:

Ձեռքէ պիտի ծա'նուի հատը 20 փարս ողջ:
Կը յուսանք որ ընթերցասէր հասարակու-
թիւնը պիտի փութայ քաջապէրել այս ձեռ-
նարկը, որ բարբառփին կը համապատասխանէ ա-
մէն կողմէ յայտնուած փափաքներուն:

Խմբագիր՝ ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ
Հրատարակիչ՝ ԳՐԻԳՈՐ ՆԱԶԱՐԷԹԵԱՆ

«ՆԱԶԱՏ ԽՕՍԲ» ԶԵՌԲԷ ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ

Ալեքսանդրիտ՝ Տ. Յ. Ղազիկեանի քով և Շէրիֆ
Փաշա լրագրագաճատ Տ. Թեյլալեանի խանութը
Գահիրէ՝ լրագրագաճատ Տ. Հունկի և Կոլորն Քէօլ-
քի քով և «Լուսարեք» թերթի գրութիւն մօտ:
Նախորդ շաբթուան թիւերը կը վաճառուին կըր-
կին գինով:

ՈՍՆ ՍԹԷՅԱՆՕ

ՆՈՐ ՎԻԲԹՈՌՈՒԱ ՕԹԷԼ Ազգայնագրիոյ Մօտ
ՅՈՒՆԻՍԻ ՄԷՂ ԲԱՅՈՒՍԾ Հարթ թիւ 2

Առաջին կարգի օթէլ, մասնաւորապէս շինուած,
այժմուս բոլոր հանդստաւէտութեան պայմաններով:
Հիանալի ճաշարան, սալօն, ծխարան: Մասնաւոր
ճաշարան: Ընդարձակ պատշգամ և պարտէզ: Ելեքտր-
րական լոյս: ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆ: Թելեֆօն թիւ 370: Հե-
տադրական հասցէ՝ Նիւ Վիքթորիա, Ռամլէ: Թոռավա-
յով տասը վայրկեան Ալեքսանդրիայէն:

Ս. Ֆ. ՌԷՉԻԿ, ՏԵՕՐԷՆ

Յ. Գ. - Մասնաւոր գին կառավարական պաշտօն-
եաներու և զինուորականներու համար: Բոլոր սեն-
եակները ծովուն վրայ կը նային:

“ԱԶԱՏ ԽՕՍՔ,,ի Պայմանները

- ԱԶԱՏ ԽՕՍՔ - ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՄԱԹ ՕՐԵՐԸ

Եզիպոսի համար բաժնեգինն է

40 ԹԻԻԸ

40 ՂՐԵ. ՈՂԶ

20

„

20

„

„

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԵՒՐՈՊԱ 40 ԹԻԻ 10 ՅՐԱՆՔ

ՌՈՒՍԻ ,, ,, 4 ՐՈՒՊԼԻ

ԱՄԵՐԻԿԱ ,, ,, 2 ՏՈՒԱՐ

Բաժանորդագրուքիւնը կանխիկ

ՀԱՏԸ 1 ՂՐԵ. ՈՂԶ

“ԱԶԱՏ ԽՕՍՔ,,ի համար բաժնեգինն կամ
որ և է գրութիւն պէտք է ուղղել հե-
տևեալ հասցէին՝

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, (EGYPT)

Մանուցումներ կրնդունուին մասնաւոր
պայրաններով:

Պատասխանատու . Խմբագիր Ե. ՕՏԵԱՆ

Տպգր. ֆորգր. Կ ՆԱԶԱՐԷԹԵԱՆ Ալեքսանդրիա